ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆ



ԾԱՂԿԱՓՈՒՆՁ ՄԱՆԿԱՆՑ

ԿԱՄ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՍ Ա.

ՈՒՍՏԿԵՐՉԱՆՑ

Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1893

ՊԱՏԳԱՐՈՒԹԻՒՆ Ս ԵՒԱՆԳԵԼԱՆ

Կեր
2302

ԳՐԱՏՈՒՆ Յ. Կ. ԱՇՃԵԱՆ
1880

1999

ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆ

ԾԱՂԿԱՓՈՒՆՁ ՄԱՆԿԱՆՑ

ԿԱՄ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ Ա.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1542.

ԷՕՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՂԵՐԱՅԵԱԼ
յՈւսումնական Խորհրդոյ Սզգ. Կեդր. Վարչութեան

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

ՀՍՍՌ-ի Գր. Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ. ՍՍՌ
им. А. Мясниковяна
Հայանիկյանի անվան

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Է
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ
ՅԱՋՈՐԴ Յ. ԳԱՎԱՖԵԱՆԻ
Կ. ՊՈԼԻՍ
Զահրեմնըյար եօղուշու, Թիւ 20

1893

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆ ԵԱԶԸՃԵԱՆ
Կոստանդնուպոլիս, Էսկի Զապթիյէ ճատտէսի, Թիւ 63

ՁՕՆ

ԱՌ ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

ԲԱՐՍԵՂ ԷՖԷՆՏԻ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱՐՔՈՒՆԻ ՎԱՌԱՐԱՆԱՊԵՏ

42302-ա
28 2303

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Թիւ 33

14 Հոկտեմբեր 1892

ՎԱՒԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉ.

Ազգային կեդրոնական Վարչութեան Ուսումնական Խորհուրդս ի քննիւն առնլով ԾԱՂԿԱՓՈՒՆՋ ՄԱՆԿԱՆՑ, ԿԱՄ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՀԱՅ. ԴՊՐՈՒԹԵԱՆ անուն դասագիրքն, պատրաստեալ ի ձեռն Մեծ. Սիմոն Էֆենտի Ֆելէկեանի, գտաւ զայն դիւրուսոյց եղանակաւ եւ պատշաճապէս պատրաստեալ, եւ օգտակար համարելով նորա յԱզգային վարժարանս գործածութիւնը, կ'արտօնէ զայն պաշտօնապէս։

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ

ԿՆԻՐ Վ. ԱՏԵՆԱԳՊՐԻ ԱՏԵՆԱՊԵՏ

Պ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ծաղկավունջն՝ որ իմ ղուտ աշխատասիրութիւնս է, ոչ ոք իրաւունք չունի ասելի որ և է յօդուած առնուլ, և յայլուր տպագրել. զայս կը ծանուցանեմ՝ ոչ եթէ իբր բարձրագոյն հեղինակութիւն մը, այլ իրաւունք են որ, ամեն ինչ թէ գեղեցիկ, թէ տգեղ, իւր տէրոջը միայն պատկանի։



ՆՈՒԻՐԻ

ԱՆՄԽԻԹԱՐ ՍԻՐՏ ԻՄ ՀԱՅՐԱԿԱՆ

ԱՌ ՀՈԳԵԿՅՈՐԴ ԴՍՏՐԻԿՆ ԻՄ ՎԱՂԱՄԵՌԻԿ

ՌԱՄԵԼԱՅ Ս. ՖԵԼԷԿԵԱՆ

ՈՂԲԵՐԳ

Առաւօտուն կելնեմ, տեսնեմ արուսեակ,
Երազոց ժամերու սիրախօս հոգեակ։
Ողջոյն տայ գիշերին կերթայ ընել դարձ,
Սիրտս սուգ է, չուզեմ ոչ ողջոյն, ոչ դարձ։

Առաւօտուն կելնեմ, կը լսեմ կոչնակ,
Բարեպաշտ սրտերու երկնաչու սուրհակ։
Աշխարհ 'ի ծունր գայ, խօսի երգաբան,
Սիրտս սուգ է, չուզեմ ոչ երգ, եւ ոչ բան։

Առաւօտուն կելնեմ, տեսնեմ արշալոյս,
Արշալուսէն խնդրեմ ցոյց տայ աչքիս լոյս.
Լոյս գայ, աշխարհ հրճուի, ես կամ մթաւոր,
Սիրտս սուգ է, ջուզեմ ոչ լոյս, եւ ոչ օր.

Առաւօտուն կելնեմ, տեսնեմ Ովկեան,
Զուկն ու ալիք իրար խառնած կը խաղան.
Շողն արեւու փայլի ալեաց մէջ մանրիկ,
Սիրտս սուգ է, ջուզեմ ոչ շող, ոչ ալիք.

Առաւօտուն կելնեմ, կը հայիմ ջորս դիս,
Դաշտեր ծաղիկ բանան, տեսնես, կ'զմայլիս.
Հովն ու թռչուն ընկեր խայտան քաղցրաձայն,
Սիրտս սուգ է, ջուզեմ ոչ խայտանք, ոչ ձայն.

Առաւօտուն կելնեմ, տեսնեմ քով ի քով,
Քոյր ու եղբայր նստած հօրկան մօրկան քով,
Սիրոյ համբոյր կուտան միմեանց կենսաբեր,
Սիրտս սուգ է, ջուզեմ ոչ համբոյր, ոչ սեր.

Առաւօտուն կելնեմ, տեսնեմ գերեզման,
Ուր կը հանգչին հազարք, բայց իմս անհման.
Ուրկէ անցնողք հեռի փախչին անդադար,
Սիրտս սուգ է, կուզեմ հոն մնալ յօժար.

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Բազմաթիւ փորձով հաստատուած է որ, մանկան մտաւոր միտքն ու սիրտ՝ իրերը ճանչցնելէ անմիջապէս զկնի՝ կրից վերաբերեալ օգտակար ծանօթութեամբ հրահանգելն անհրաժեշտ է. զի եթէ զնա բարութեան և չարութեան, գթութեան և անգթութեան, նախանձու և աննախանձութեան, ողորմութեան և ներողութեան, և այլ այսպիսեաց օգտակարութիւնն և վնասակարութիւնն Աստուծոյ և մարդկան հաճելի կամ խոտելի լինելն ազգի ազգի վերերով նկարագրուի, և ուսուցուի, յայնժամ նոյն հրահանգն մանկան հասակին հետ կը բնաւորի, և կը յաջողի զանի վերածել 'ի բարոյական կենցաղ մարդկային ազգի.

Այս տեսութեամբ հարկ է որ, ընթերցարանիս մէջ գտնուած հատուածներն մանկան ուսուցանելէ, և ընդարձակապէս բացատրելէ զկնի, 'ի բերան ուսուցանել նաև ոտանաւորներն, գիտնալով թէ, մանուկն նախապէս ինչ որ գաղափարէ, և սիրէ, նովիմբ բարոյապէս կը սնանի, ու կը մեծնայ.

Գիտելի է թէ, Հայ դպրութեան մէջ նախնական չորս դասակարգութիւն կայ, Այբբենարան, Հեգարան, Ընթերցարան և Քերականութիւն. մանուկը Այբբենարանին գրերը լաւ ճանաչելէ, և ընդարձակ Հեգարանին(1) մէջ վանկերու բաժանմամբ ար դա բա-

(1) Եթէ Հեգարանի մէջ ընդարձակ վարժութիւն չլինի, մանուկը չը կրնար առանց հեգելու ընթերցարանն ընթեռնուլ, և յայնժամ ընթերցարանը կըլլայ հեգարան, որպէս կերեւի ի բազում ընթերցարանս.

սեր ընթեռնլոյ վարժուելէ ետև, երրորդ դասակարգութեան՝ այն է ընթերցարանի մէջ բառ մը կազմող վանկերն աւելորդ է անջատ նշանակել՝ այլ հարկ է զնա արդարասեր տալ ընթեռնուլ, և ոչ ար դա բա սեր։

Ընթերցարանս Ա. և Բ. մասի բաժանեալ է. Ա. մասն նախ փոքր, և ապա հետզհետէ ընդարձակ հատուածներով պատրաստեցինք, որպէս զի մանուկն հետզհետէ ընթերցման վարժութիւնը դիւրութեամբ յառաջ տանի ճիշդ թուաբանական ճշմարտութեամբ՝ որպիսի է 1, 2, 3, 4 և այլն, որ որչափ յառաջ երթայ, նոյնչափ կը բազմապատկի։

ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ

Մանկիկ առ այս ծաղկափունջ,
Եւ հոտոտա քաղցրաշունչ.
Ապա աստի ամէն օր
Մեղր չինէ մտաւոր։

ՎԱՐԴ

Վարդը հոտաւէտ ու սիրուն է, որոյ փուշերը թէև շատ անգամ կը վիրաւորեն հոտոտացողը, բայց ոչ ոք չը մերժեր զանի, այլ կը սիրէ. զի որպէս առանց թերութեան գեղեցկութիւն չկայ, նոյնպէս և առանց պակասութեան արարած չկայ:

Միհրանն ալ թէև տղայական պակասութիւններ ունի, բայց ինքը բարի և սիրուն տղայ մ'է. հետեւապէս իւր թերութիւնքը զինքը ատելի չեն ըներ, զի անոնք երկրի վրայ ինկած փոշիներու պէս են, որ դաստիարակութեան

հողմը հեռզհեռէ ընչելով կանհետացնէ:

Վարդը փուշ ունի,
Հոտ անուշ ունի.
Ինքը գեղեցիկ,
Թերթ քնքուշ ունի.
Նոյնպէս ալ բարի
Տղայն է վարդի
Նման, որ ամենք
Կը սիրեն զանի:

ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՐԻ ՎԱՐԺՈՒՀԻՆ

Բարի վարժուհին օր մը իւր աշակերտուհոյն ըսաւ — Հէ՛ր անոյշ, աղջիկս կուզէս որ, Աստուծոյ ընտրեալ պակը գլխուդ վրայ փայլի, և պարանոցդ կախուած ոսկի մանեակ ունե-

նաս, և այնպէս ամենուն սիրելի ըլ-
լաս։—

—Այո սիրելի վարժուհիս, բոլոր սրտով կուզեմ։

—Ուրեմն ջանա՛ որ, ամենայն հնա-
զանդութեամբ հօրդ բարի խրատները չմերժես, և մօրդ կամացը հնազան-
դիս. այս ընելով՝ կըլլաս բարեկիրթ, ազնիւ, և սիրելի աղջիկ մը։

Տեսէ՛ք, տեսէ՛ք Հերանոյշ,
Ի՞նչ բարեկիրթ, և անուշ.
Գլուխն ունի շնորհաց փայլ,
Աստեղց լուսոյն պէս ծաւալ.
Կուրծքին վրայ մի մանեակ
Շողայ որպէս արեգակ.
Եթէ տեսնէ զայն ով որ,
Կըսէ «երնեկ իւր հօր մօր»։

ԾԱՂԿԱՓՈՒՆՋՍ ՆՈՒԻՐԻ ԱՌ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՆ

Մանկիկ.

Գեղեցիկ գունով
Անուշակ հոտով
Թէ ծաղիկ տամ քեզ,
Կը թառմի, գիտես։

Թէ հանդերձ փայլուն
Տամ գեղեցկագոյն,
Զայն թէ գործածես,
Կը հիննայ գիտես։

Եթէ քաղցրահամ
Շատ կերակուր տամ,

Զայն քանի ուտես,
Կը մարսի, գիտես։

Թէ դարնան օրեր
Քեզ տանիմ դաշտեր,
Ուրչափ ալ կայտառես,
Զ'այն Թողուս, գիտես։

Անուշակ դեղդեղ
Թէ լսես շատ հեղ,
Կանցնի հովի պէս,
Զայն փորձով գիտես։

Իսկ այս ծաղկափունջ
Թ'և հոգի անշունչ,
Բայց Թէ սիրես լաւ
Այս չանցնիր բնաւ։



Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ

Աստուած մեր արարիչն ու բարե-բարն է, մեզ շատ կը սիրէ։

Նա է որ, ամեն առտու մեզի արև կը խրկէ։

Նա է որ, ծառին տերև և միրգ, և ծաղկին անուշ հոտ կուտայ, որ վայելեմք. մեզի համար լեռներն ու դաշտեր գեղեցիկ զարդարողը նա է. ուստի պետք է որ բոլորով սրտիւ շնորհակալ ըլլանք իրեն, և բոլորանուէր սիրեմք, ու պաշտեմք զինքը։

ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Աստուած իմ դեռ նոր գնաց
Գեշերավարն արուսեակ,
Եւ խրկեցիր լուսազգեաց
Մեզ կենսաբեր արեգակ։

Միրաս առ քեզ, ձեռքս ի վեր
Ի ծունր գամ երկիւղած,
Խնդրեմ ի քէն ո՛վ իմ Տէր
Լոյս տուր խաւար իմ աչաց։

Տուր և հոգի սրբագին,
Որ լաւ պաշտեմ ես զքեզ,
Մինչև որ գամ ի յերկին,
Երբ կոչնագիր ինձ ղրկես։

Իմաստութիւն հօր Յիսուս
Լցեր երկինք ու երկիր,
Իմաստութեան քոյին լոյս
Ծագէ և յիս օրն ի ժիր։

ՓՈՔՐԻԿ ԵՐՈՒԱՆԴ

Փոքրիկ Երուանդ ծնողքէն սովրած, բարեպաշտական սովորութիւն ունէր՝ ամէն առտու երբ անկողնէն ելնէր, նախ երեսը կը լուար, յետոյ ծնողաց ձեռքն համբուրելով, անոնց օրհնութիւնը կառնուր, և կամ երբ վարժարանին մէջ դասի պիտի սկսէր, կամ ցորեկ և երեկոյ սեղանի պիտի նստէր, ամենայն բարեպաշտութեամբ և ջերմեռանդութեամբ հետեւեալ աղօթքը կընէր, և ապա գործի կսկսէր։

Ով բարի Աստուած՝
Որ մեզ կուտաս հաց,
Եւ կը ներես մեզ,
Որ ներեմք նոյնպէս
Մեր պարտապանաց
Ամէն յանցանաց.
Իմաստութեան լոյս
Մեզ տուր քաղցրայոյս,
Որով գամք առ քեզ,
Եւ պաշտեմք զքեզ
Աղօթքով խնկով,
Ձեռքով ու ծնկով.
Որ մեզ անվտանգ
Լինին յաւիտեանք,
Օրհնեալ քո անուն,
Եւ փառք քեզ անհուն։

ԳԱՐՈՒՆ

Ահա գարունը դարձեալ եկաւ. յոլի երկիրն՝ որ ձմրան մէջ երկունք կը քաշէր, իւր արգանդը բացաւ, և ծնաւ ամէն տեսակ բարիք։

Խոպան լեռներն, մերկ դաշտերն ու ձորեր, տերևամթափ պարտէզներն ու անտառներ, առհասարակ անուշահոտ ծաղիկներով, կանաչագեղ մարգերով, և գեղեցիկ տերևներով հարսի նման զարդարեցան. գետեզերքը և աղբերաց շուրջը կանաչ գորգերով

յարդ արուած է. սև սև ամպերն հեռացան, և երկինք իւր ժպիտը ցցուց աշխարհի, սակայն պէտք է գիտնալ թէ, ամէն բոյս՝ ծաղիկ, ու տունկ մի և նոյն աճումը՝ գեղեցկութիւնը, և հասակը չունին։

Անոնցմէ ոմանք նիհար, ոմանք տըկար, ոմանք գձուձ վիճակի մէջ են, որոց պատճառն այն է թէ, ոմանց հողը բերրի չէ, ոմանց կլիմայն տկար է, ոմանց զարդացումը խնամոց տակ չէ. ինչպէս են պարտիզին, դաշտին, ու ձորին ծաղկունքն, որոց առաջինը ընտանի, և միւս երկուքը վայրի ծաղիկ կըսուին։

Հրանտի մանկական հասակն ալ ծաղկի պէս է, որ եթէ բարի, և պարտաճանաչ ծնողաց, և դաստիարակի խնամօք մեծնայ, լաւ կը կրթուի, կուսանի, և իւր անձին օգտակար ու բաղմաց սիրելի կըլլայ, և կըսուի ընտանի ծաղիկ և ոչ վայրի։

Այդ ջանա որ մանկութեանդ գար-

նան մէջ միտքդ ու սիրտդ գիտութեան և բարեկրթութեան ծաղկօքը զարդարես, և ապագայդ երջանիկ ըլլայ. եթէ ոչ, կանցնի գարունը, և դու կը մնաս անպտուղ։

Գարունն է եկեր
Մեր դաշտին վերև,
Վարդ շուշան բերեր,
Ու պայծառ արև։

Օն ելէք զուարթ
Մանկունք ի հանդէս,
Մանիշակ ու վարդ,
Քաղեցէք պէս պէս։

Գարունն է եկեր
Ի պարտէզ, յայգին,
Միրգ խաղող բերեր
Մեզ պարգև անգին.

Օ՛ն, ելէ՛ք զուարթ
Մանկունք ի հանդէս,

Քաղեցէք հանդարտ
Մերդ խաղող պէս պէս։

Գարունն է եկեր,
Ջինջ հոսէ աղբիւր,
Եւ թռչնոց երգեր
Լսի ընդհանուր.

Օ՛ն, ելէք զուարթ
Մանկունք ի հանդէս,
Լսեցէք հանդարտ
Նուագներ պէս պէս։

Գարունն է եկեր
ՅԱստուծոյ ընծայ,
Եւ մեզ կենաբեր
Նոր օրեր կուտայ.

Ելէք խնդագդեաց
Մանկունք ի հանդէս,
Օրհնեցէք զԱստուած
Աղօթիւք պէս պէս։



ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայրախնամ վարժապետութիւնը դեր ի վերոյ է քան զծնողս մանկան. զի բարի ծնողք զմանուկն նիւթապէս միայն լաւ կը խնամեն, և ընտանեկան բարոյականութեամբ կը հրահանգեն, որ ասի աւելի նախապատրաստութիւն մ՚է կենաց դպրաւոր պիտոյից. իսկ վարժապետը մանկան միտքը ուսմամբ և դիտութեամբ կը զարդարէ, և նո-

վիսք կը մշակէ սիրտն ի զգացումն բա-
ղոյականի։

Ահա ասոր համար է որ, կը պար-
տաւորիմք գոնէ այնչափ սիրել, ու
յարգել մեր վարժապետներն, որչափ
որ կը սիրեմք ու կը յարգեմք մեր ծը-
նողքներն։

Իսկ որ գվարժապետն չ՝ յարգեր, ա-
պերախտ է այնպիսին, թէև վարժա-
պետն ուսման պահանջուած հանգա-
մանքն իսկ կատարելապէս չունենայ։

Դու էր կեցած ես այդպէս անձկագին,
Աչերդ պիշ պիշ յառած ի յերկին.
Եւ կ՝սքանչանաս, թէ օդապարիկ
Ի՞նչ է, որ օդին մէջ խաղայ մենիկ։
Այն օդապարիկ չէ երկնասըլաց,
Վարժապետութիւն մի է մեծապանծ.
Որ այնպէս յառնէ անհոգի, անձայն,
Եւ չափէ երկնից անեզրը սահման։

Թելերդ՝ որ տանին յաշխարհէ յաշխարհ,

Կամք, և սէր, և բանք փոխանցեն
յիրեար.
Կըսես դու քեզէն, թէ ի՞նչ բան է այն,
Որ խօսք տայ, առնու վայրկեան առ
վայրկեան։
Այն չէ հեռագիր աշխարհագնաց
Վարժապետութիւն մի է մեծապանծ,
Որ թէև անխօս, այլ զերթ բանական
Խօսի ընդ ամէն աշխարհ հոգեկան։

Տեսնես հեռուէն հողմի պէս թեթև
Հսկայ մ՝ի դետին կը թռչի անթև.
Կապշիս թէ, որչափ սրանայ ընդ փոյթ,
Ում չհասանէ թռչուն կամ նժոյգ։
Այն երկաթուղի չէ արագընթաց,
Վարժապետութիւն մի է մեծապանծ.
Որ թէև երկաթ է, հուր կամ շոգի,
Բայց ամէն երկիր կը կոխէ կանցնի։

Երբ ի շոգենաւ, կամ ի գործարան,
Կամ ի գեղեցիկ հայիս ապարան,
Եւ կամ ճեռակերտ գեղարուեստ
պէս պէս,

Էրում մատն ի շուրթ զարմանաս այդպէս.
Գիտցիր թէ մեծ գործ, մեծ հանճար համայն
Վարժապետութեան արդիւնք են միայն։

ԲԱՐԻ ՀՕՐ ՄԸ ԽՐԱՏԸ

—Ռամելայ՝ աղջիկս, ո՞ր բանը շատ կը սիրես, զբօսանքը, բարեձև և գեղեցիկ հագուստը, համադամ կերակո՞ւր, մի՞րգ։

—Ադոնց և ոչ մին չեմ սիրեր, թէև իւրև անձնական պիտոյք բնական է որ, կուզեմ վայելել։

—Ուրեմն ի՞նչ կը սիրես։

—Նախ Աստուած, յետոյ ծնողքս, և յետոյ ընկերս կը սիրեմ։

—Աստուած ի՞նչ բանի համար կը սիրես։

—Անոր համար որ, զիս նա ստեղծեց, կը պահպանէ, և արևն ու լուսինը, ծառն ու ծաղիկը, և ամէն բարիք նա մեզ տուաւ որ վայելենք։

—Ինչո՞ւ ծնողքդ կը սիրես.

—Անոր համար որ, զիս ծնան, խնամեցին, և ապագայս դաստիարակութեամբ և ուսմամբ պատրաստելու համար նիւթական ու բարոյական ամեն կարելի զոհողութիւն չ'զլացան։

—Ընկերդ ի՞նչ պատճառաւ կը սիրես։

—Որովհետև Աստուած ապսպրած է որ, մարդ իւր ընկերը իւր անձին պէս սիրէ. ուստի ասոր համար ընկերս կը սիրեմ։

—Ուրեմն կեանքդ որո՞ւ կը պարտիս։

—Նախ Աստուծոյ, ապա ծնողացս։

—Ապրիս, զաւակս. որովհետև այդ սրբազան պարտաւորութեամբ տոգորեալ ես, կ'օրհնէ զքեզ Աստուած, կը

սիրեն զբեզ ծնողքդ, և ընկերք, և դու երջանիկ օրեր կունենաս։

Բարի տղան թէ Աստուծմէ կը պահուի,
Թէ հօրն ու մօր կը մնայ միշտ սիրելի։
Աղգականներ բարեկամներ յարգեն միշտ,
Երջանկութիւն տեսնէ, և ոչ բնաւ վիշտ։
Իսկ չար տղայն կրէ պատիժ չարաչար,
Եւ իւր կենաց մէջ տառապի անդադար։

ՍՈԽԱԿ ԵՒ ՎԱՐԴ

Սոխակը փոքրիկ և տգեղ թռչուն մ'է, և պարտէզներու և անտառներու մէջ կը բնակի։

Իւր ձայնը բոլոր թռչնոց ձայնէն աւելի գեղեցիկ է։

Այս թռչնիկ մանաւորապէս վարդը շատ կը սիրէ, և անդադարապէս կերդէ նորա վերայ. այս պատճառաւ ամէն լեզուի մէջ սոխակը վարդին սի-

բահար ցուցուած է, և առ այն բաղմաթիւ երգեր շինուած են։

Զարեհ, դու ալ եթէ գիտութեան մէջ վարդի նման բացուիս, և բարի վարուքդ անուշահոտ բուրես, ամէն ոք գքեզ կը սիրէ, և կը պատուէ։

Պըլպուլ պըլպուլ
Ինչո՞ւ անդուլ
Սրտիկդ ի վիշտ
Կերգես դու միշտ։

Պուրակներու
Մէջ սիրարկու
Էր կաս յերեր
Ցիւ և գիշեր։

Աշխարհ համայն
Քեզ ըղձանան,
Ընդէ՞ր այդպէս
Դէմք կը ծածկես։

Ահա մարգեր,
Կանաչ դաշտեր,

Թռիր, երգէ,
Ամենք քո է։

— Ոչ դաշտ ոչ մարգ
Զուներն ինչ յարգ.
Լոկ խնդրեմ ես
Վարդս 'ի պարտէզ։

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գոհարիկ իւր հօրը կը հարցնէր.— Հայրիկ, աշխարհի մէջ ամենէն մեծ, ամենէն դժուարին, և ամենէն կարևոր պաշտօնն ո՞րն է։

— Տղայ մը մեծցնելն՝ իւր կենաց գլխաւոր պահանջներուն համաձայն։

— Կենաց գլխաւոր պահանջը ո՞րն է։

— Բարոյականութիւն և գիտութիւն, որք նիւթական և ֆիզիկական բարեաց անսպառ աղբիւրներն են։

Ով որ բարեոյն չունի ճաշակ,
Եւ գիտութեան մեղր անուշակ,
Յամէն բարեաց կը զրկի նա,
Եւ վերջապէս թշուառ կըլլայ։

ՄԱՆԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՊԷՏՔ Է ՄԱՅՐՆ ԸԼԼԱՅ

Կատուի երկու ձագեր քով իքով նստած կը դաշնակցին, որ եթէ չափահաս ըլլան, միասին մուկ բռնեն. սակայն ըստ որում միանց հետ մենամարտելն ալ իւր ձեւերն ու հնարքներն ունի, կորոշեն նախ իրենց մօրմէն զանոնք սորվիլ, ապա մուկ որսալ։

Այս տեսութեամբ անանոց մայրերն ալ գիտցածնին զաւակնուն կը սորվեցնեն, ուրկէ պէտք է ասուն մայրեր խրատուին, և մանկան մատաղ հասակին հետ կենաց կարեւոր պէտքերն խնամով ուսուցանեն։

Երկու փիսիկ
Ձոյդ մը քուրիկ.
Մինն փոքրիկ,
Միւսն մեծիկ.
Նստած սիրով
Մէկ մէկու քով,
Ապագային
Վրայ խօսին.
Կըսեն «Թէ որ
Ըլլանք խոշոր
Քեզ հետ ընկեր՝
Բռնենք մկներ»։

Մեծը սակայն
Ըսաւ զայս բան.
«Մեր մայր եթէ
Սովրեցնէ
Մուկ բռնելու
Լաւ ձեւերու,
Յաջող յայնժամ
Որս ժամէ ժամ
Կընեմք անվախ,
Թէ ոչ կայ վախ»։



ՀՈՒՆՁՔ

Երբ հունձքերը հասնին, մշակին կինն, հարսն ու աղջիկ, հայրն ու տղայ արշալուսոյն կանուխ եկած՝ մանգաղ ի ձեռին արտը կերթան հնձելու։

Թէ երթալու, և թէ հնձելու ժամանակ գրեթէ շարունակ կերգեն, և գարնան արևու սաստիկ ջերմութեան, և հնձաքաղի տաժանելի աշխատութեան մէջ կրած տագնապն ու խոնջանք այն միաձայն երգերով կը թեթևնան, և իրենք կոգեւորին ի գործ, և այնպէս կաւարտեն հնձաքաղը։

Հարս ու աղջիկ յերգ և 'ի խաղաղ
Եղբայր եղբօր հետ միասին
Առէք մանգաղ, ելէք ի քաղ,
Զի բեղմնաւոր հունձք մեր հասին։

Աստուած մեզի ցորեան առատ,
Գարի առատ, կորեկ վարսակ,
Տուաւ նաև մեզ կտաւատ,
Մեր վաստակոց արժանի վարձք։

Սուր սուր մանգաղ, ու գերանդիք
Ահա խաղան յահեակ ու յաղ,
Հունձք ի յերկիր թափին լիք լիք,
Ոմանք յետ կոյս, ոմանք յառաջ։

Խուրձեր կապուած են մեծ ջանքով,
Եւ դէզ ի դէզ գեղեցկագին,
Մին միւսին շարուած է քով,
Յանկուցանէ աչք անցորդին։

Հարս, ու աղջիկ յերգ և ի խաղ
Եղբայր եղբօր հետ միասին,
Առէք մանգաղ, ելէք ի քաղ,
Զի բեղմնաւոր հունձք մեր հասին։



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Երկրագործութիւնը ամէն վաստակէ աւելի արդար է, և ամէն աշխատանքէ աւելի օգտակար։

Մշակին առևտուրը Աստուծոյ և հողի հետ է. ինքը ժամանակին կը վարէ, կը ցանէ, և մնացածը Աստուծոյ թողլով՝ կսպասէ որ հնձէ։

Բարի Աստուածը՝ որ միշտ կը խնա-

մէ բոլոր արարածներն, անձրև կուտայ տակաւ ցանքերը ոգեւորելու, արև կուտայ զանոնք աճեցնելու, և զով հողմն կ'արձակէ զանոնք զօրացնելու։

Լուսինը՝ որ նախախնամութեան մի գիշերապահ գործակատարն է, գիշերէ գիշեր իւր աստեղաց բանակաւը ցօղ կը սրսկէ ցանքերուն վրայ, և անոնք առօյգ հասակ մը կունենան, և այնպէս ցօղունները կերկարին, կը հասնան, հասկերը կը մեծնան, և կը պարարտանան. յետոյ հունձքը կը հասնի, և մշակը կակսի ուրախութեամբ հնձել զանոնք. և յարդը յարդանոցը, և ցորեանը, գարին, վարսակը, եայլն, շտեմարանը կը ընու, և կօրհնէ զԱստուած. որ զինքը այն պարգեւին արժանացոյց։

—Ով որ Աստուծոյ բարիքը կը ճանչնայ, միշտ բարիք կը գտնայ

Լ. Բ. Ա. ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԳ ՄՇԱԿԻՆ

Է՛լ, եւ ամպիկ, եւ յերկին,
Բայց քո թաթիկ ցօղածին.
Որ գայ սրակէ յորդ անձրեւ,
Ծարաւ արտից մեր վերեւ.
Որով նոր ոյժ զգենուն,
Եւ ես օրհնեմ քո անուն:

Եւ արեգակ, եւ յերկին,
Բեր կենսունակ լոյս քոյին.
Որ գայ, և տայ ջերմութիւն
Մեր ջրոտեալ հունձքերուն.
Որով նոր ոյժ զգենուն,
Եւ ես օրհնեմ քո անուն:

Է՛լ, եւ զեփիւռ մեղմասիք,
Սփռէ թեւերըդ փափկիկ.
Որ հունձք՝ այգիք, ծառք ու միրգ
Քեւ զգենուն մարմին գիրգ.

Եւ յաջ ու ձախ ման առնուն,
Եւ ես օրհնեմ քո անուն:

Այլ սակայն դուք ինձ նման
Արարածներ էք համայն.
Է՛կ ամպիկ, եկ արեգակ,
Մօտ է՛կ զեփիւռ թեւարձակ.
Օրհնեմք զանուն Արարչին՝
Մեզ այս բարեաց տուողին:

ՕՐ ՕՐ ՄԱՅՐԱԿԱՆ

Մայրական օր օրը ամէն երգէ սըրտագրաւ, սիրազեղ, և գորովալից է։ որով օրրանին շուրջը կը պարափակեն հաստատուն սէր, անդուլ հսկողութիւն, և անվհատ աշխատանք:

Հիւանդութիւն, աղքատութիւն, և

ազգի ազգի նեղութիւնք չեն զօրեր պահ մը մոռացութեամբ ծածկել զորդին ի մօրէն։ Եւ ահա այս իսկ է որ, մայրութիւնը գերազանց է քան զհայրութիւն։

Աստղիկ կը նեղէ
Եւ մայրն կերգէ։

Եղբայր մ'ունիս, արևս է նա
Օր, օր Աստղիկս օր, օր.
Քոյրդ ալ գլխիս մի լուսնկայ,
Օր, օր Աստղիկս օր, օր։

Դու ալ հիմայ աստղիկ մ'եղար՝
Օր, օր Աստղիկս օր, օր.
Իմ աչքերուս մէջ լուսավառ,
Օր, օր Աստղիկս օր, օր։

Մեծցիր խրկեմ քեզ վարժարան,
Օր, օր Աստղիկս օր, օր։
Որ պակի իմ յոյս համայն,
Օր, օր Աստղիկս, օր, օր։

ՆՈՐ ՏԱՐԻ

ԿԱՄ

ԿԱՂԱՆԴ

Նոր տարին կամ Կաղանդը երկու աղբիւր ունի, մին Յիսուսի Քրիստոսի յաշխարհ գալու թուականին վերբսկսումն է, այսինքն երբ 1893 թուականը լրանայ, և 1894 թուականը սկսի, կըլլայ Նոր տարի, կամ Կաղանդ։

Ահա այս պատճառաւ է որ, ամէն քրիստոնեայ ազգ միահամուռ կը տօնեն Նոր տարին, կամ Կաղանդը։

Իսկ միւսն հաւասարէ առ հաւա-

տար, ի փոքուէ առ մեծն, և ի մեծէ առ փոքրն, և ի բարեկամէ առ բարեկամն սիրոյ և յարգանաց փոխադարձութեան պարտաւորիչ և հաճոյական հանդէս մ'է:

Ահա այս պատճառաւ է որ, երբ Կաղանդ գայ, մարդիկ փոխադարձ այցելութիւն, յարգանաց և սիրոյ արտայայտութիւն, և համբոյրք հարազատաց կը փոխանակեն միմեանց, և ի վերահաստատութիւն այսոցիկ ըստ արժանւոյն այլ և այլ նուէրներու յիշատակաց կը վերահաստատեն մտերմութիւնները, կը նորոգեն փոխանակեալ սէրն, և կ'ամրապնդեն յարաբերեալ յարգանքներն. այսպիսեաւ հարուստ թէ աղքատ, տէր թէ ծառայ, գիտուն թէ տգէտ առհասարակ խնդագին կողջունեն Նոր տարւոյ կամ Կաղանդի աւետաւոր գալուստն:

Տարի տարի, նոր տարի,
Ողջոյ գալուստ քո բարի.

Զի դու բերես մեզ նոր յոյս,
Եւ նորոգես կենաց լոյս:

Քեզ կսպասէ իմ մամիկ,
Հարիւրամեայ պառաւիկ.
Առած՝ բացած ի ձեռին
Քթախոտի իւր «խութին».
Քաշէ, քաշէ, կը հրճուի,
Կուզէ ապրիլ շատ տարի.
Եւ երբ տեսնէ նոր տարին,
Գոչէ խսկոյն սրտագին.
Տարի տարի նոր տարի
Ողջոյ գալուստ քո բարի.
Զի դու բերես մեզ նոր յոյս,
Եւ նորոգես կենաց լոյս:

Քոյրս ու հայրիկ և իմ մայր
Քեզ կսպասեն անդադար.
Իրենց ցաւոց մէջ համայն
Գոչեն, երբ որ քեզ տեսնան.

Տարի, տարի, նոր տարի։
Ըլլայ գալուստ քո բարի.
Զի դու բերես մեզ նոր յոյս
Եւ նորագեսս կենաց լոյս։

Երիտասարդ ու տղայ
Թէ երբ լսեն Կաղանդ գայ,
Ժողովին, խումբ յօրինեն,
Երգեն, պարեն, ու կայտառեն.
Եւ կը գոչեն «Նո՛ր տարի,
Ըլլայ գալուստ քո բարի.
Զի դու բերես մեզ նոր յոյս,
Եւ նորոգես կենաց լոյս։

Յակոբ հետաքրքիր տղայ մ'էր. ինչ որ տեսնար, կամ ինչ որ լսէր, կուզէր հասկնալ, զատկական օրերէն միոյն մէջ հօրը դիմեց, և հարցուց, Հայրիկ, Զատիկն ի՞նչ է որ, երբ գայ, ամէն քրիստոնեայ ազգ հանդէսներ կընեն, խնջոյքներ կը կազմեն, նուագարաններ կը հնչեցնեն, կը հագուին, կը սգուին, և միմեանց աւէտիս տալով կը բերկրին և կը հրճուին։

Հայրը տեսնելով որ, Յակոբ փոխանակ տղայական զբօսանաց կուզէ կրօնական ու բարոյական վիպակներ լսել, ըսաւ. մեր նախածնող Ադամն ու Եւան երբ ի դրախտին էին, Աստուծոյ

պատուէրը անսասանեցին, մեղանչեցին, և Աստուած ալ բարկանալով զանոնք դրախտէն արտաքսեց.

Այն մեղքին ըսուեցաւ սկզբնական մեղք. որ նախածնողաց բոլոր սերունդն ալ նոյն մեղքին տակը գտնուեցան:

Եւ որովհետև մինչև այն ժամանակ Աբրահամ, Յակոբ, Իսահակ նահապետներն, և այլ Աստուածապաշտ հոգիք նոյն մեղօք դժոխք գացած էին, և ըստ որում նոյն մեղքը իրենց կամքովն եղած չէր, հետեւաբար անիրաւութիւն եղած պիտի ըլլար անմեղ հոգիներն նոյն մեղքին տակ թողուլ:

Աստուած՝ որ բովանդակապէս բարի է, այն սկզբնական մեղքը մարդոց վրայէն բոլորովին սրբելու համար իւր միածին որդին՝ զՅիսուս Քրիստոսը յաշխարհ խրկեց, որ Մարիամ սուրբ կոյսէն մարմնանալով և ծնելով՝ իւր անձն զոհ տայ՝ մարդկային ազգը նոյն մեղքէն փրկելու համար. ուստի եկաւ, և ի Հրէից չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ, և իւր ի խաչին թափած արիւնը մեռեալ արդարներուն սկզբնական մեղաց քաւութիւնը եղաւ. և յետ այնորիկ մեռանելի արդարոց համար ալ մկրտութիւնը սկզբնական մեղաց քաւութեան խորհուրդ սահմանեց, և ապա ինքն փրկութեան անբռնաբարելի յաղթանակաւն յարեաւ յերկինս:

Եւ որովհետև Յիսուս Քրիստոսի խաչելութիւնը զոհողութիւն մ'էր ի փրկութիւն մարդկային ազգի, այն պատճառաւ զոհ կամ զենում ըսուեցաւ, որ մենք Զատիկ կանուանեմք, այսինքն օր փրկութեան:

ԵՐԳ ԶԱՏԿԱԿԱՆ

Զատիկ է Զատիկ,
Ի՜նչ օր գեղեցիկ.
Եղբայր քոյր սիրով
Հօրով ու մօրով՝
Միմեանց համբոյր տան
Սիրով սրբազան:

Ծաղիկ վեր առած
Զիւր գլուխ ծռած,
Եւ ծառոց սաղարթ
Աւրթնցած զուարթ,
Եւ աղբեր վտակ
Կը կանխէ յալեակ,
Հովիկն ու թռչուն
Խ'ամեն բնութիւն
Տես թէ ինչ ուրախ
Յօրինեն նոր տաղ,
Եւ աւետիս տան
Միմեանց քաղցրաձայն,
Կըսեն թէ Յիսուս
Փրկութիւն և յոյս
Առ մեզ բեր, և ինք
Յարեաւ ի յերկինք:

Զատիկ է Զատիկ,
Ինչ օր գեղեցիկ.
Եղբայր քոյր սիրով՝
Հօրով ու մօրով
Միմեանց համբոյր տան
Սիրով սրբազան:

ԱՄԱՌ

Երկինք յատակ է, արևն ու լուսին անդադար կը հսկեն ամեն կողմ:

Արեւու ջերմութիւնը ցորեկին, և լուսնի զովութիւնը գիշերին բոյսին՝ տունկի և մարդու առհասարակ կ'այ-ցելեն, և շարունակելով իրենց շրջանն՝ և կեանք ներշնչելով՝ զանոնք կատա-րելութեան հասակի կուտան թեւա-կոխել:

Արևն ուր որ հանի, այն տեղւոյ բերքերն բազմաբեղուն և հասուն կըլ-լան:

Մանուկն ալ այնպէս է, զի եթէ ծնողական բարուք խնամոց, և խաստուն դաստիարակութեան արևոնն չը մնանի, իւր բարոյական կենդանութիւնն տկար, և ինքն անպտուղ կը մնայ:

Այժէն ոմ որ իւր զաւկին ի բարոյական լաւ խնամք կուտայ, ուր ուրեմն նորա քաղցր երախայրիքը կը վայելէ լիուլի:

Ողջոյն քեզ ամառ,
Դու բարեաւ եկար.
Մեզ բերիր խնձոր,
Ուրչափ ալ բոսոր.
Եւ քաղցրահամ տանձ
Տուիր անանխանձ.
Եւ խաղող գինի,
Յոր միտք մեր հրճուի.
Ձմերուկ ու սեխ,
Սրտի տապոյ դեղ.
Ապա քան զամէն՝
Որ մեզ յոյժ պէտք են,

Ցորեան ալ տուիր՝
Մեզ հայց կենապիր.
Այսպէս շատ բարիք
Բերիր սիրելիք,
Որ զայն վայելեմք,
Եւ զԱստուած օրհնեմք.
Ողջոյն քեզ ամառ,
Դու բարեաւ եկար:

ՇՈՒՇԱՆ ԵՒ ԴԴՈՒՄ

Շուշանը հովտին պատուական քաղաքացին է. իսկ դդումը պարտիզաց կոշտ գիւղացին:

Օր մը դդումը կը տեսնէ որ, քովը շուշան մը կայ, զոր ինք իւր տերևնեւրով ծածկած ըլլալով չէր տեսած:

Կը հայի անոր վրայ, կզգայ բոյրն անուշակ, և նորա գեղեցկութեանը

յափշտակուած՝ կզմայլի. ուստի կողջունէ զշուշան, և հետեւեալ խօսակցութիւնը տեղի կունենայ իրենց մէջ։

ԴԴՈՒՄ — Ըսէ ինծի սիրելի,
Դու ե՞րբ եկար դրացի։

ՇՈՒՇԱՆ — Դեռ հինգ վեց օր հազիւ կայ
Որ ես ծնայ երախայ.
Այս տեղ բուսայ թէև ես,
Բայց խորհէի, թէ ինչպէս
Այս հովտին մէջ միայնակ
Պիտի ապրիմ շարունակ.
Տեսս զիս Աստուած խրկեց որ,
Ընկեր ըլլանք ամէն օր.
Եւ միշտ ապրիմք միասին,
Աղէկ չ՚ըլլար դրացին։

ԴԴՈՒՄ — Սակայն աւա՜ղ, որ օրեր
Քո ընդ երկար չեն տեւեր.
Ես դդում եմ, դու շուշան,
Թէև տեսքովդ անման,
Բայց կարճատև է կեանք քոյ,

Այս կեանք՝ դեղոյ և սիրոյ.
Աստուած չընէ թէ մեռնիս,
Մեծ ցաւ կըլլայ իմ սրտիս.
Զի սէր տուի, չառնում ետ
Սիրոյ պայմանն է աղէտ։

ՇՈՒՇԱՆ — Բայց դու ալ ծեր ես հիմակ,
Հասած է քո ժամանակ.
Գուցէ երկուքս մէկանց
Կերթամք ի ծոց յաւիտեանց։

Հազիւ զայս խօսք խօսեցան,
Մանիշակին գոյնք փախան.
Ինկաւ յերկիր դալկացած,
Դդումն ալ յետ վերջացած.
Իջին 'ի հող սրտաճայնք,
Այս էր սիրոյն հետեւանք։

Աստուած սէր է, քնար է, երգ է.
այս իսկ է որ, ամէն խանդ և ամէն
միտք կը վերանան առ այն։

Աստուած զետեղեց լուսինը յերկին,
Որ լոյս տայ մեզի ի մութ գիշերին.
Այգուն մեզ տուաւ արփին լուսաւոր,
Այն է որ զինքը սիրեմք ամէն օր,
Զի սէր է բոլոր։

Աստուած մեզ տուաւ հոգեխօս քնար,
Բարւոյն գեղեցկին անուամբ հարել
յար.

Վսեմն նաև ձգել և 'ի բան,
Այս է որ զանի օրհնեմք պերճաձայն,
Զի քնար է այն։

Աստուած մեզ տուաւ աշուն ու ձմեռ.
Գարուն և ամառ չորեքին քոյրեր.
Որ մեզի բերեն բարիք ու վայելք,
Այս է որ զինքն սրտագին երգեմք,
Քանզի ինքն է երգ։

Նաև իւր պատկեր տուաւ հրաշազան,
Եւ անմահ հոգի մեզ կեալ անսահման.
Եւ զի գերագոյն արարածներ եմք.
Այս է որ զինքը ծնրադիր պաշտեմք,
Զի Աստուած գիտեմք։

ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

— Հռիփսիմէ, աղջիկս ըսէ, լսեմ. զմով շատ կը սիրես, և կամ ո՞մ առաւել պարտիս։

— Երբ դեռ փոքր էի, մայրիկ, միշտ գեղեցիկ պատմութիւններ կը խօսէիր ինձ, և բարի ու ջանասէր տղուն, գըթասիրտ մարդուն, որդեսէր հօրն,

բարեկիրթ մօրն, ընկերին առ ընկեր, և եղբօրն առ եղբայր գործադրելի սէրն ու պարտիք այլ և այլ սրտագրաւ պատմութեամբ կը բացատրէիր և կրկնելով կըսէիր, թէ այս ամենայն ընկերական կենաց մեծամեծ բարեմասնութիւնքն են. և ապա կը ցուցնէիր հակառակ վարք ունեցողներուն Աստուծոյ մերժելի, և ի մարդկանէ խոտելի լինելն. այսու ամենայնիւ երկար տարիներ շարունակ շեշտելով կը կըրկնէիր հետեւեալ բարի խրատներն, որք այն օրէն ցայսօր Հաստատուն բնաւորութիւն մ'եղան յիսը։

Կըսէիր, զաւակս, նախ զԱստուած սիրելու, և զանի պաշտելու է. վասն զի Նա է մեր արարիչն ու տէր։

Երկրորդ թագաւորը սիրելու է. վասն զի յետ Աստուծոյ Նա է մեր պատուոյ, ընչից ու կենաց միակ պաշտպանն։

Երրորդ սիրելու է մեր ծնողքը, որ մեր լինելութեան պատճառ լինե-

լով հանդերձ՝ զմեզ կը խնամեն, կը սնուցանեն, ու կը մեծցնեն։

Զորրորդ սիրելու է ուսմունքն, որ մեր կենաց մէջ մեր երթալու համար ուն լուսատու լապտերը պիտի լինի. զի առանց անոր ոչ զԱստուած, ոչ թագաւորը, և ոչ ծնողք չեմք կարող ըստ արժանւոյն սիրել։

Ես միշտ կը հաւատամ թէ,

Աչքերս սիրելն մեր պարտաւորութիւնն է,

Աչքերս սիրելն մարդոյ կատարելութիւնն է,

Եւ այնպէս սիրելն ընկերական կենաց մի կենարար պայմանն է։

— Ապրիս աղջիկս. շատ գեղեցիկ, և իմաստութեամբ խօսեցար, վասն զի համոզմամբ խօսեցար։

Խորհէ, որ ես իմ որդեսիրութեամբս եթէ մայրական պարտաւորութեանս անգէտ լինէի, կամ թերանայր ի նմին, դու այս ընտիր ու գեղեցիկ խորհրդածութիւնքը կամ ուշ կը սովրէր, և կամ բնաւին չէիր սովրէր։

Եթէ ուշ սովրէիր, այդ համոզումը չէր բնականաբար իքեզ. և եթէ բնաւին չսովրէիր, յայնժամ ընկերական կենաց մէջ տգիտութիւն մի պիտի կազմէիր, և յամենայնի գրեթէ անօգուտ պիտի ըլլայիր գործերդ։

Երանի՜ այն մանկան, որ զինքը խրատող՝ բարի, և իր պարտուց գիտակ, և կարող մայր ունի, այն է նախակրթական բարեկարգ դպրոց մը ունի, ուր մանկիկն կուսանի ամեն ինչ որ անհրաժեշտ է բարւոք կենցաղավարութեան։

— Ով որ ծառ մը տարաժամ կը տնկէ, խորտրմատ, աճող, և բեղմնաւոր չըլլար։

— Ով որ համոզմամբ որ և է ճըշմարտութիւն չընդունիր, այնպիսին թութակի մը պէս է, որ գիտէ լսել, խօսիլ, բայց չհասկնար։

ԱՇՈՒՆ

Դառնաշունչ հողմերը հետզհետէ կսկսին շնչել. մարդ, ծաղիկ կսկսին թառամիլ. սաղարթուն ծառեր իրենց դեղնած տերեւներն մի զմիոյ զկնի կը թոթափեն յերկիր, և աշխարհ սա-կաւիկ մի ևս իւր շքեղազարդ պաճուճանքէն կը մերկանայ. և այն տունկերն՝ որ լաւ արմատ չեն բռնած, ուր ուրեմն կը ջրանան, որպէս և երիտասարդն՝ եթէ ժամանակին բարոյականի և գիտութեան հիմնական պահանջներուն չէ տնած, կը զրկուի կենաց դեղեցիկ վայելքներէն:

Վարդը պարտիզին,
Շուշանը դաշտին
Տուաւ ցաւալի
Հրաժեշտն յետին:

Եւ մարդն յեղերերդ
Ասաւ մահու վերք,
Զգեց, ու գնաց
Գետակին եղերք:

Հովասուն սաղարթ
Ծառերու զուարթ
Յերկիր թոթափին
Հետ հետ անընդհատ:

Մահ մ'է, որ առաւ
Զվայելս ամբաւ,
Եւ վարէ, տանի
Զամէնք ի զրաւ:

ԹԷ Ի՞ՆՉ Է ՄԱՅՐՆ

Մայրն յետ Աստուծոյ գերագոյն արարած մ՚է յերկրի, կը յղանայ, կը տագնապի, և մահուան սպառնալեօք կը ծնի զաւակ. և յետ այնորիկ կենցաղոյս ցաւոց և վշտաց ովկիանն ինկած կը տարուբերի, և յաղեաց յաղիս խորասուզեալ կը հրաժարի ի բարուոք կենցաղավարութենէ, և մայրական պարտիքն ու սէր իբր մի ղէկ ի ձեռին կերթայ յանդունդէ յանդունդ, ի խոչէ ի խուրթ, և ամէն պատահարաց ընդդէմ համբերատար կը խնամէ իւր սիրեցեալ զաւակն, մինչև որ ողջունէ իւր նախածնող հողն, ուր աշխարհներ դացած թաղուած և անյիշատակ մնացած են:

Եթէ մօր մը անզուգական հոգածութիւնը նկատուլթեան առնուի, կ՚սքանչանայ մարդ:

Կը տեսնես ինչ որ կընէ, կատարեալ գորովով կընէ:

Անձնապէս ինչ նեղութիւն որ կրէ, անսպառ սիրով կը կրէ:

Առաւօտէ ցերեկոյ զաւակը գրեթէ միշտ գրկացը մէջ է, և օրը բազմիցս կաթ կուտայ, և եթէ լայ մանկիկն, սիրաբոյր համբոյրներով, և խանդակաթ օրօրներով կ՚սփոփէ, կը հանդարտեցնէ, և բնաւին չձանձրանար:

Գիշերն ի լոյս օրօրոցին քովիկը նստած՝ ինքն թէ առողջ ըլլայ, թէ հիւանդ, անքուն և անխոնջ կօրօրէ, կը դիտցնէ, և չտրտնջար:

Եթէ մանկիկն հիւանդանայ, այնչափ անձնուէր խնամով կը նայի, որ երկար ժամեր ոչ հաց կուտէ, և ոչ ջուր կը խմէ, և ծոյլ յայլմէ եղած և սրտաբէկ, անյագաբար կը գգուէ իւր սրտահատորն, և աչքին չեն երեւիր ոչ հաճոյք, ոչ զբօսանք, և ոչ որ և է գեղեցիկ առարկայք, զի իւր բոլոր զգացման և խոկմանց միակ և սիրելի

առարկայն է Աստուած, ու որդւոյն սէրն։

Այսպիսի իմն գերագոյն սիրով կը մեծցնէ զաւակն, և երբ երիտասարդութեան առոյգ ժամանակն հասնի, և նա արձակ լեզուաւ և ոտքով երբ սկսի առաւօտուն տնէն դուրս ելնել, մայրն մինչև երեկոյ հաղարաւոր կասկածով լցեալ՝ դէտակն կը մնայ նորա գալստեանը. և երբ նա գայ ի տուն, մայրն սիրազեղ խանդաղատանօք կելնէ ընդառաջ, կողջունէ, և կը թուի թէ ինքն պարապ վանդակ մի էր, և փախչող թռչնիկն դարձաւ ի նոյն։

Այսու ամենայնիւ երբ զաւակը բարի ըլլայ, իւր անզուգական խնամոց վարձքն առած կը համարի. և եթէ անառակ ըլլայ, և նորա ոչ պատուաբեր արարքներն հասնին իւր ականջին, կը տխրի, կը մորմոքի, և բաղում՝ այն է կարտասուէ լռելեայն։

Ողբաւոր ձայնով շարունակ կը խրատէ, և կը յորդորէ զանի յուղղու-

թիւն և ի պատիւ. և երբ նա անուղղայ մնայ, չատեր, այլ միշտ կը սիրէ, և այն ամենայն իբր ճակատագրին անխուսափելի մի հարկը կը նկատէ։

Այսպէս մայրական սէրն օրօրոցէն սկսեալ մինչև ի գերեզման կը տևէ։

Արդ, ո՞վ է որ աշխարհի մէջ քան զմայրական անընկճելի սէրն առաւել կամ հաւասար արարք ունենայ։

Այո, այսօրինակ անթիւ փորձեր միահաղոյն կը հաստատեն թէ ընկերական կեանց մէջ գերագոյն մարդը մայրն է, և հայրը նորա օգնականը միայն։

Մայրութիւնը կեանց բաժանումն է. որչափ զաւակ ունենայ, այնչափ մասի կը բաժնուի կեանքն, և այնպէս կապառի, ու կը վերջանայ։